թութեան միջոցով ոչնչացնել ժողովրդի մոլեռանդութիւնը, եւ այդ նպատակով դպրոցների թիւը մեր երկրում օրըստօրէ բազմանում է: Մենք մինչեւ անգամ հոգ ենք տանում եւ հայոց դպրոցների յառաջադիմութեան մասին: Այգեստանում կայ մի նշանաւոր դպրոց, որը գտնւում է իմ առանձին խնամակալութեան ներքոյ: Ես իմ սեփական միջոցներից այդ դպրոցի վարժապետին թոշակ եմ տալիս:

— Վարժապետը ինչպէ՞ս մարդ է, ընդունա՞կ է իր պաշտօնին, — հարցրեց Ասլանը:

— Ամենապատուական մարդ է, մեր քաղաքի հայ գիտնականների մէջ նրան կարելի է առաջինը համարել:

Փաշայի խօսքը Սիմոն պատուելիի եւ նրա դպրոցի մասին էր: Ասլանը այնպէս ձեւացրեց իրան, որ ամենեւին տեղեկութիւն չունի այդ դպրոցի մասին:

Խօսակցութիւնը դարձեալ ընդհատուեցաւ, երբ մանկլաւիկների մի խումբ, գեղեցիկ արծաթեայ մատուցարանների վրայ դրած, ներս բերեցին զանազան տեսակ անուշահոտ շերբեթներ եւ զանազան տեսակ քաղցրաւենիք ու խմորեղէններ, պատրաստուած նուշով եւ հոտաւէտ համեմներով: Փաշան իր ձեռքով ընտրում էր անուշ պատառները եւ առաջարկում էր Ասլանին:

— Փորձեցէք այդ «փախլաւայից», — ասում էր նա, — հայոց առաջնորդը սաստիկ սիրում է այդ «փախլաւան»: Երբ որ նա ինձ մօտ է գալիս, եթէ «փախլաւա» չլինի, անպատճառ դժգոհ կը մնայ:

— Իրաւունք ունի հայոց առաջնորդը, — պատասխանեց Ասլանը, — բաւական լաւ է պատրաստուած:

— Դուք ծանօ՞թ էք նրա հետ:

— Ոչ, ես դեռ չեմ տեսնուել նրա հետ:

— Անպատճառ պէտք է տեսնուել, ես ձեզ խորհուրդ կը տայի տեսնուել նրա հետ, դուք շատ գոհ կը մնայիք. նա պատուական մարդ է, ամենապատուական մարդն է: Գալ Վան եւ հայոց առաջնորդին չտեսնել, դա միեւնոյն կը լինէր, որպէս գնալ Հռոմ եւ պապին չտեսնել:

— Ես օգուտ կը քաղեմ ձեր խորհրդից, — ասաց Ասլանը, — առանց հայոց առաջնորդի հետ տեսնուելու, չեմ հեռանայ այդ քաղաքից:

Փաշայի եւ հայոց առաջնորդի բարեկամական յարաբերութիւնները մեզ յայտնի էին. այստեղից բացայայտ էր, թէ նա ինչո՛ւ յորդորում էր Ասլա-